

Վերապատիւ Վէորդ Ս. Երբ Եպիսկոպոսին՝ յիշեալ դպրոցին մի և կէս տարիէ հետէ 60 աշակերտաց ուսմանց քննութիւնը կատարելով՝ Հոգաբարձութիւնը յատուկ յայտարարութեամբ ներկայացուցած է առ Վ. Եհափառ Աթուղիկոսն՝ քննութեանց արդիւնքը, որ բերկրառիթ և միանգամայն շնորհակալեաց արժանի է :

Եյս առթիւ վերոյիշեալ քաղաքին Ս. Համբարձման Եկեղեցւոյ ժողովրդականք մեծաւ երախտագիտութեամբ պարգելով իւրեանց սրտից զգացմանց հաւատովքը առ Վ. Եհափառ և Սրբազնապոյն Աթուղիկոսն, նա և շնորհակալութիւն մատուցած են յիշեալ դպրոցին Հոգաբարձութեան և դասատուին Աղգասէր և բարենպաստակ ջանից համար: ահաւասիկ ժողովրդականաց 15 անձանց ստորագրութեամբ՝ զրութիւնը:

ՆՈՐԻՆ Վ. Ե. Հ. Ե. Փ. Ե. Ռ. Ռ. Թ. Ե. Ե.

S. S. ԳԵՈՐԳԱՅ Դ. ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

Ի ժողովրդականաց Ս. Համբարձման եկեղեցւոյն՝ Նոր-Նախիջևանի.

Ամենախոնարհ Յայտարարութիւն.

Ի շնորհաբեր այցելութանն Վ. Եհափառ Հօրդ մերոյ յամին 1867, ի քաղաք սյսր, ՚ի մէջ այլոց բարեկարգ անօրէնութեանց բարեհաճեալ էին Հայրապետական Սուրբ կամք Չեր հրամայել՝ զի բացցին առ իւրաքանչիւր Եկեղեցի ծխական Վալրոցք՝ որոց կարօտ էր քաղաքս մեր ՚ի հերուն հետէ:

Չպաշտելին և զամենապատուական առաջադրութիւն Վ. Եհափառութեանդ ունելով ի նկատի և տեսանելով զչոյժ կարե-

ւորութիւն այնորիկ երեցիփոխան մեր մեծարոյ Պետրոսն, Խումաճեանց փութացաւ յառաջ քան զամենեսին ի կատար ածել զայն և երաց զծխական Վալրոց յանուն Սուրբ Համբարձման Եկեղեցւոյս ՚ի 1-ն նոյեմբերի 1867 ամի:

Վ. Եհափառ Տէր, աւելորդ է մեզ բացատրել՝ քանի՜ անպատմելի բարերազգութեան և զի մեզ՝ Հայրապետական մեծարելի հրաման Չեր՝ առիթ. քանզի աշակերտք Վալրոցիս զոլով ընդհանրապէս որդիք ամենաթշուառ յետին աղքատաց, որք հազիւ հազ զօրական ապրուստ իւրեանց զտանն տաժանական աշխատութեամբ՝ պարտ էին իսպառ մնալ առանց ուսման և բարոյական կրթութեան:

Չարդիս աշակերտք Վալրոցիս են 60. ուսանին զհետադայ առարկայս. զՀայերէն ընթերցանութիւն անսայթաք, Վրիստոնէական վարդապետութիւն յօրինեալն ՚ի Մսերայ վարժապետէ և զսուրբ զրոց պատմութիւն Ամբրոսիոս վարդապետի, Հայերէն Վերականգնութիւն Ե. մասն, Ռուսերէն ընթերցանութիւն, Թուարանութիւն, և զգեղազրութիւն Հայերէն և Ռուսերէն, զորսուսոցանէ ջերմեռանդ աշխատասիրութեամբ և ազգասիրական ոգւով Երժանապատիւ Յովհաննէս քահանայն Տէր Վալրիէլեան:

Ներքին բարեկարգութիւն Վալրոցիս ՚ի 28 յունվարի 1868 ամի յանձնեցաւ ընտրեալ համահաճութեամբ ժողովրդոց և հաստատեալ ՚ի Թեմակալ Առաջնորդէ վեճակիս Հոգաբարձուաց՝ որք են արժնապատիւ Վէորդ վարդապետն Մարտիրոսեան, Մեծարոյ վաճառականք Պետրոս և Մանուէլ Խումաճեանք, Ստեփաննոս Չոռֆեան և Խաչատուր Ստեփաննասեան, որք

խմիսսին ընդ յիշեալ ուսուցչին մէջոյ ոչ միայն ջանադիր եղեալ են ի բարեկարգել և բարեդքել զընթացս ուսման Վալրոցիս և պահպանել անստերիւր զսահմանեալն կարգ, այլ և յետ քանիցս անգամ նուիրելոյ աշակերտաց զհարկաւոր զրեանս և զհանդերձեղէնս, յայս վերջին նուազ ևս ի դաւաճեալ Սրբազան Եռաջնորդի վեճակիս ոչ զլացան երեքն ի նոցանէ Վիտորոսն և Սանուէլ Խումաճեանք և Սակիաննոս Չոռչովեան յիւրեանց սեպհականութեանց պատրաստել վասն բոլորեցունց միատարազ զգեստս՝ յորս ծախեցին աւելի քան զհարիւր ընդհարար արծաթ:

Հրապարակական հարցաքննութիւն աշակերտաց Վալրոցիս եղև յՉն յուլիսի այսր ամի ի ներկայութեան Սրբազան Թէմակալ Եռաջնորդի և բաղմամբի ժողովրդակաւաց՝ և յընթացս միոյ և կէս ամի գտին զաշակերտս Վալրոցին յառաջացեալ յուսմունս առաւել քան զարժանն, մինչ զի յետ ընդունելոյ զերանացի գովարանութիւն Սրբազան Եռաջնորդի՝ Հոգաբարձութիւն և Սուսուցիչ Վալրոցիս արժանացան առանձինն և զրաւոր շնորհակալութեան:

Եւ քանզի սկզբնապատճառ այսր ազգային յառաջադիմութեան և Եստուածահաճոյ բարենպատակ գործոյս վերաբերի և եթ Ձերդ Վեհափառութեան՝ զոր իբրև արեգակնային կենդանացուցիչ ճառագայթս ծաւալեցիք ի վերայ ազքատ մանկուոյս մերոյ զգութ խնամոց բարեկարգութեան Ձերոյ, վասն որոյ թողուն զայս ամենայն զանխուլ ի Ձերդ Վեհափառութենէ վարկանիմք ոչ ի դէպ, ամինիրի զորդիական երախտապարտ զհոգևորութիւնս մատուցանելով առ սրբանեալ դարչապարս Սեփի Խնամակալիդ Հայաստանեայց Եկեղե-

ցւոյ՝ յոյտ առնեմք ամենախոնարհաբար զհանգամանաց ծխական Վալրոցի Սուրբ Համբարձման եկեղեցւոյս, զարդնաւոր դասախօսութիւն ուսուցչի Յովհաննու քահանայի Տէր Վարրիկեան, զկարգապահ բարեկարգութիւն և զբարեպաշտական նուիրագործութիւն Հոգաբարձուաց նորին, և հայցեմք առ իւրաքանչիւր ի նոցանէ դարձուցանել զհայրական քաղցր ակնարկութիւն՝ իբրև առ աննկնղ և անխարդախ ծառայողս ազգային օգտի, որովք դոյուք մէք մխիթարեալք, եղիցի Հայրապետական սուրբ անօրէնութիւն Ձերդ Վեհափառութեան քաջակերութիւն և այլոց ի սոյն օրինակ յանխոնջ աշխատութիւնս վասն ազգային լուսաւորութեան:

Յանձն առնելով զմեզ սրբանուէր աղօթից և հովանաւորութեան Վեհափառ Հօրդ մերոյ, մնամք որդիական պատկառանք և վերադատութեամբ

Ձերդ Վեհափառութեան՝ Սեփի Խնամակալիդ Հայաստանեայց Եկեղեցւոյ

Նուստ և անձնանուէր ծառայք.

(Սարգիս-Բեճ 15 անխնայ):

... Խոհարար-Բեճ Երարար Երարար

Վեհափառ Վաթուղիկոսի ամենայն Հայոց Տեսուն Վեհոգայ հրամանաւ տարադրուած Եղգաշահ կանոնաց միտքն ու բովանդակութիւնն, որպէս Երևանոյ Նահանգի ամենայն դաւառների և դաւառիկների Վաղարշաց և զիւղօրէից մէջ, նոյնպէս և Երմաւուրոյ դաշտի զիւղօրէից մէջ (Սարգիս-Բեճ Գաւառ) տարածելոյ համար և միանգամայն ծանօթացնելոյ տեղւոյն Հայ-Բրիտանեայց հասարակութեանն Նու-